ՀՀ վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհուրդ

ՀՀ վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհրդի նիստը կայացել է 2004թ. ապրիլի 30-ին,օրակարգում ընդգրկված են եղել հետեւյալ հարցերը՝

1. ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների եւ մարզպետարանների (Երեւանի քաղաքապետարանի) կողմից 2003թ. իրականացված երիտասարդության ոլորտին վերաբերող ծրագրերի եւ միջոցառումների մասին:
2. ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների եւ մարզպետարանների (Երեւանի քաղաքապետարանի) կողմից 2004թ. իրականացվելիք երիտասարդության ոլորտին վերաբերող ծրագրերի եւ միջոցառումների մասին:
3. «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին:
4. Այլ հարցեր (մարզպետարաններում երիտասարդության հարցերի պատասխանատուների վերաբերյալ, մարզային երիտասարդական կենտրոնների մասին, տեղեկատվություն Եվրախորհրդի երիտասարդության հարցերի ղեկավար կոմիտեի ս/թ փետրվարի 23-25-ը կայացած նիստի վերաբերյալ):

(Լ. Ասատրյան, Ա. Ավետիսյան, Ա. Աշոտյան, Ա. Ավետիսյան, Ա. Սողոմոնյան, Մ. Ջավադյան, Ս. Դաղբաշյան, Մ. Բաղալյան, Վ. Խաչիկյան, Ա. Կարապետյան, Ա. Մարգարյան)

Որոշվեց՝

1. Ընդունել ի գիտություն ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, եւ մարզպետարանների (Երեւանի քաղաքապետարանի) կողմից 2003թ. երիտասարդության ոլորտում իրականացված ծրագրերի եւ միջոցառումների մասին տարեկան հաշվետվությունը:

2. ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ) Լ. Ասատրյանին, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ (խորհրդի նախագահի տեղակալ) Ա. Կարապետյանին՝

ա) 2003թ. երիտասարդության ոլորտում կատարած աշխատանքների արդյունավետությունն ուսումնասիրելու նպատակով խորհրդի կազմում ներառված եւ այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկմամբ ստեղծել

մոնիտորինգային խումբ՝ ուսումնասիրության արդյունքները 1 ամսյա ժամկետում ներկայացնելով ՀՀ վարչապետին.

բ) կազմել եւ սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի N 1930-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ.

գ) ՀՀ Շիրակի, Լոռու եւ Սյունիքի մարզերում «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության մասնաճյուղեր ստեղծելու նպատակով սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 17-ի N 418 որոշման մեջ լրացում կատարելու վերաբերյալ.

դ) աշխատանքներ տանել Խորհրդի կազմում Արցախի ներկայացուցիչ ընդգրկելու ուղղությամբ:

3. ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ) Լ. Ասատրյանին՝ երիտասարդական հասարակական կազմակերպություններում եւ ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդներում կազմակերպել «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծի առավել լայն քննարկում:

4. Հավանություն տալ ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, եւ մարզպետարանների (Երեւանի քաղաքապետարանի) կողմից 2004թ. երիտասարդության ոլորտում իրականացվելիք ծրագրերին եւ միջոցառումներին՝ անհրաժեշտության դեպքում դրանցում կատարելով համապատասխան փոփոխություններ:

5. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ Մ. Բաղալյանին, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի տեղակալ Վ. Տերտերյանին՝

համատեղ քննարկել եւ ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչություններում նախատեսել երիտասարդության հարցերով զբաղվող մասնագետ՝ համապատասխան փոփոխություններ կատարելով պաշտոնի անձնագրերում:

6. Սահմանել ՀՀ վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհրդի «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի լավագույն ազգային ստեղծագործող-կատարողի հատուկ մրցանակ:

10. ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Հ. Հովեյանին, ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարար Ա. Մանուկյանին՝

համատեղ քննարկել եւ 10-օրյա ժամկետում ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանն աշխատանքային տարածքով ապահովելու վերաբերյալ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության 17.04.2002թ. թիվ 418 որոշմամբ ստեղծվել է «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը: 2004-2006թթ. նախատեսվում է վերջինիս մասնաճյուղերի ստեղծումը մարզերում (2004 թվականին 3 մարզում), որոնց գործառույթը պետք է լինի պետական երիտասարդական քաղաքականության իրականացումը տեղերում եւ տեղեկատվական-խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

2004 թվականին մարզային երիտասարդական կենտրոններ են նախատեսվում ստեղծել ՀՀ Շիրակի, Սյունիքի եւ Լոռու մարզերում:

Աղետից առավելապես տուժած Շիրակի մարզում առավել ցայտուն է դրսեւորվում երիտասարդության առջեւ ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների սրությունը: Միեւնույն ժամանակ մարզում երիտասարդների թիվը ըստ վիճակագրական վերջին տվյալների կազմում է 90525 մարդ, գործում են թվով 6 պետական ԲՈՒՀ-եր կամ դրանց մասնաճյուղեր, 2 ոչ պետական ԲՈՒՀ եւ 9 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցում սովորում է 7106 ուսանող: Մարզում գրանցված են եւ գործում են 12 երիտասարդական հասարակական կազմակերպություններ: Ելնելով Շիրակի մարզում պետական երիտասարդական քաղաքականության առավել արդյունավետ իրականացման կարեւորությունից, հաշվի առնելով դեմոգրաֆիական, սոցիալ-տնտեսական եւ այլ գործոնները առաջարկվում է 2004 թվականին մարզային երիտասարդական կենտրոնի հիմնումը այս մարզում:

Լոռու մարզը առանձնանում է հանրապետության մյուս մարզերից նրանում առկա երիտասարդների ամենամեծ թվով՝ 98350 երիտասարդ: Միեւնույն ժամանակ մարզում գործում են թվով 8 պետական եւ ոչ պետական ԲՈՒՀ-եր կամ դրանց մասնաճյուղեր եւ 9 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցում սովորում է 6448 ուսանող: Մարզում գրանցված են եւ գործում են 9 երիտասարդական հասարակական կազմակերպություններ: Հարկ ենք համարում նշել որ հանրապետությունում Լոռու մարզը աչքի է ընկնում երիտասարդների եւ երիտասարդական կազմակերպությունների հասարակական մեծ ակտիվությամբ, կազմակերպվածությամբ եւ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցության առկայությամբ, ինչը ավելի արդյունավետ կդարձնի մարզում ստեղծվելիք երիտասարդական կենտրոնի գործունեությունը եւ աշխատանքային փորձի առումով մեծ դեր կունենա հետագա երկու տարիներին մյուս մարզերում ստեղծվելիք կենտրոնների համար:

Հաջորդ մարզը, որտեղ առաջնահերթ կարեւորվում է մարզային երիտասարդական կենտրոնի ստեղծումը, Սյունիքի մարզն է: Մարզում երիտասարդների թիվը ըստ վիճակագրական վերջին տվյալների կազմում է 41025: Միեւնույն ժամանակ մարզում գործում են թվով 5 պետական եւ ոչ պետական ԲՈՒՀ-եր կամ դրանց մասնաճյուղեր և 8 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցում սովորում է 3995 ուսանող: Մարզում գրանցված են եւ գործում են 14 երիտասարդական հասարակական կազմակերպություններ, որոնք ակտիվ համագործակցելով պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ բավականին արդյունավետ հասարակական գործունեություն են ծավալում, ուղղված մարզի երիտասարդության հինախնդիրների լուծմանը: Հաշվի առնելով Սյունիքի, որպես հանրապետության հարավային մարզի ռազմավարական կարեւորությունը, նաեւ այն հանգամանքը, որ այս մարզը հանդիսանում է Արցախի հետ անմիջական կապող օղակը եւ կարեւորելով մարզում պետական երիտասարդական քաղաքականության առավել արդյունավետ իրականացման առաջնահերթությունը, առաջարկվում է 2004 թվականին մարզային երիտասարդական կենտրոնի հիմնումը այս մարզում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերում 2004 թվականին երիտասարդական կենտրոնների ստեղծման եւ առաջին մեկ տարվա գործունեության արդյունքում ձեռք բերված փորձը կկիրառվի նաեւ հետագա 2 տարիների ընթացքում մյուս մարզերում կենտրոնների ստեղծման ժամանակ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության մարզպետարանների երիտասարդության հարցերով զբաղվող հաստիքային մասնագետների առկայության մասին

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում երիտասարդության ոլորտին վերաբերող պարտականությունը դրված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, սպորտի եւ երիտասարդության հարցերի վրաչության մշակույթի, սպորտի եւերիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ալեքսան Առաքելյանի վրա: Չկա:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ

Շիրակի մարզպետարանը երիտասարդության հարցերով զբաղվող հաստիքային մասնագետ չունի: Երիտասարդության ոլորտին վերաբերող աշխատանքները կազմակերպվում են մարզպետարանի աշխատակազմի մշակույթի բաժնի կողմից:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ

Արարատի մարզպետարանում երիտասարդության հարցերով զբաղվող հաստիքային մասնագետ չկա: Այդ հարցերով զբաղվում է մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության բաժնի գլխավոր մասնագետ Սեյրան Նազարյանը: Չկա:

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ

Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմում երիտասարդության հարցերով զբաղվող հաստիքային մասնագետ չկա, սակայն այդ պարտականությունները դրված է կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության գլխավոր մասնագետ Պարգև Համբարձումյանի վրա: Չկա:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ

ՀՀ Արմավիրի մարզպետարանում երիտասարդության հարցերով զբաղվում է մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության մշակույթի եւ սպորտի բաժնի առաջատար մասնագետ Նաիրա Սարգսյանը: Չկա:

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզ

Վայոց Ձորի մարզպետարանի աշխատակազմում երիտասարդության հարցերով զբաղվող մասնագետի պարտականությունները դրված է աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության գլխավոր մասնագետ Աղասի Հովհաննիսյանի վրա: Չկա:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ

Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության առաջատար մասնագետ Հովհաննես Թադեւոսյանը, ըստ քաղաքացիական ծառայողի պաշտոնի անձնագրի, հանդիսանում է երիտասարդության հարցերով զբաղվող հաստիքային մասնագետ: Կա:

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ

Մարզպետարանի աշխատակազմում չկա երիտասարդության հարցերով զբաղվող մասնագետի հաստիք, սակայն աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության մասնագետ Նարինե Պողոսյանի պաշտոնի անձնագրում ամրագրված է երիտասարդության հարցերով զբաղվելու պարտականությունները: Չկա:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ

Կոտայքի մարզպետարանում երիտասարդության հարցերով զբաղվող հաստիքային մասնագետ չկա: Այդ հարցերով զբաղվում է մշակույթի բաժնի առաջին կարգի մասնագետը: Չկա:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ

Սյունիքի մարզպետարանը երիտասարդության հարցերով զբաղվող հաստիքային մասնագետ չունի: Երիտասարդության ոլորտին վերաբերող աշխատանքները կազմակերպվում են մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության, մշակույթի եւ սպորտի վարչության կողմից: Չկա